



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 589

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

16 դեկտեմբերի 2020թ.

ՊԱՐՈՆ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Մրգաշեն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 15-ին կայացած թիվ 11 հերթական նիստի որոշումները էլեկտրոնային տարբերակով:

Առդիր 41 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊՈՂՈՍՅԱՆ



Կատարող՝ Շողիկ Ղազարյան
Հեռախոս՝ (093) 63-19-50



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 44-Ա

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 11

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 11 հերթական նիստի օրակարգը:




1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 54-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. 2021 թվականի ընթացքում Մրգաշեն համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:
3. Մրգաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին:
4. Մրգաշեն համայնքի տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:
5. Համայնքային ենթակայության կրթական հաստատության 2021 թվականի տեղական վճարների արտոնություններ սահմանելու մասին:
6. Մրգաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի վարձատրության չափի մասին:
7. Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմի, Մրգաշեն համայնքի մանկապարտեզ՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
8. 2021 թվականի Մրգաշեն համայնքի բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ս. Ասատրյան
Զ. Արամյան
Ս. Խաչատրյան
Դ. Հակոբյան
Գ. Մուրադյան
Դ. Նիկողոսյան
Ս. Վարդանյան

/  /
/  /
/  /
/  /
/  /
/  /
/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 45-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 54-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Մրգաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «2020 թվականի Մրգաշեն համայնքի բյուջեի նախագծի քննարկման և հաստատման մասին» թիվ 54-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ս.Ասատրյան

/  /

Զ.Արամյան

/  /

Ս.Խաչատրյան

/  /

Դ. Հակոբյան

/  /

Գ. Մուրադյան

/  /

Դ.Նիկողոսյան

/  /

Ս. Վարդանյան

/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ


Հավելված

Մրգաշեն համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 15-ի թիվ 45-Ն որոշում

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի ավագանու
2019թ.-ի դեկտեմբերի 12-ի թիվ 54-Ն որոշման հավելվածում կատարվող
փոփոխությունները

Հազ.դրամ

Ծրագիր			Հոդված	Հոդվածի անվանում	15.12.2020թ-ի դրությամբ	Ավելացում/+/ կամ պակասեցում/- /	Ծշտված բյուջե
1	1	1	4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	25232,5	-880,0	24352,5
1	1	1	4214	-Կապի ծառայություն	680,0	10,0	690,0
1	1	1	4112	-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4500,0	870,0	5370,0
9	1	1	4637	-Ընթացիկ դրամաշնոհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	24360,0	-900,0	23460,0
8	2	4	4269	-Հատուկ նպատակային այլ սյուլթեր	500,0	900,0	1400,0
4	5	1	5113	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	3000,0	150,0	3150,0
4	5	1	5134	-Նախագծահետազոտական ծախսեր	400,0	-150,0	250,0
					58672,5	0,0	58672,5

Մ.Ասատրյան /  /
 Զ.Արամյան /  /
 Մ.Խաչատրյան /  /
 Դ. Հակոբյան /  /
 Գ. Մուրադյան /  /
 Դ.Նիկողոսյան /  /
 Մ. Վարդանյան /  /

Դեմ

Ձեռնպահ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 46-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԵՐԻ
ԱՆՑԿԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13 -րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Մրգաշեն համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 01-ի ընդունած կանոնակարգի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2021 թվականի ընթացքում Մրգաշեն համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Մ.Ասատրյան

/  /

Զ.Արամյան

/  /

Մ.Խաչատրյան

/  /

Դ. Հակոբյան

/  /

Գ. Մուրադյան

/  /

Դ.Նիկողոսյան

/  /

Ս. Վարդանյան

/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված
Սրգաշեն համայնքի ավագանու
2020թ-ի դեկտեմբերի 15-ի
թիվ 46-Ա որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հ/Հ	ԱՄԻՍ	ԱՄՍԱԹԻՎ
1.	ՀՈՒՆՎԱՐ	15-ին
2.	ՓԵՏՐՎԱՐ	12-ին
3.	ԱՊՐԻԼ	09-ին
4.	ՀՈՒՆԻՍ	9-ին
5.	ՀՈՒԼԻՍ	7-ին
6.	ՍԵՊՏԵՄԲԵՐ	6-ին
7.	ՀՈԿՏԵՄԲԵՐ	12-ին
8.	ՂԵԿՏԵՄԲԵՐ	15-ին

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ս.Ասատրյան

/  /

Զ.Արամյան

/  /

Ս.Խաչատրյան

/  /

Դ. Հակոբյան

/  /

Գ. Մուրադյան

/  /

Դ.Նիկողոսյան

/  /

Ս. Վարդանյան

/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 47-Ա

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի պահանջի՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Մրգաշեն համայնքի ղեկավարի 2021 թվականի կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման կարգը և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Մրգաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 49-Ա որոշումը:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Մ.Ասատրյան

/  /

Զ.Արամյան

/  /

Մ.Խաչատրյան

/  /

Դ. Հակոբյան

/  /

Գ. Մուրադյան

/  /

Դ.Նիկողոսյան

/  /

Մ. Վարդանյան

/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



ԿԱՐԳԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սրգաշեն համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը:
2. Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով:
3. <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի իմաստով սահմանված համայնքի սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը՝ համաձայն համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և համայնքի ավագանու սահմանած սույն կարգով:
4. Սույն կարգում թվարկված սեփական լիազորություններն սպառիչ չեն: <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքից բացի, այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքը կարող է իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքի շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:
5. Համայնքի ղեկավարը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, համայնքի տարածքում սեփական լիազորություններն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝
 - 1) Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների
 - 2) Բնակիչների մասնակցության
 - 3) Ֆինանսների
 - 4) Պաշտպանության կազմակերպման բնագավառում
 - 5) Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման
 - 6) Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության
 - 7) Հողօգտագործման բնագավառում
 - 8) Տրանսպորտի
 - 9) Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների
 - 10) Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
 - 11) Սոցիալական պաշտպանության
 - 12) Գյուղատնտեսության և անասնաբուծության և բուսասանիտարիայի
 - 13) Շրջակա միջավայրի պահպանության
 - 14) Զբոսաշրջության

**II. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ**

6. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառում համայնքի ղեկավարը

- 1) Կատարում է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է համապատասխան միջոցներ,
- 2) Իր լիազորությունների շրջանակում կայացնում է որոշումներ, որոնցով խթանում է համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի և նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացումը,
- 3) Կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը, լիազորագիրը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար:

7. Բնակիչների մասնակցության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) Ստեղծում է բավարար պայմաններ համայնքի բնակիչների համար՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության):
- 2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում,
- 3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին.

8. Տնտեսների բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) կազմում և համայնքի ավագանու հաստատման է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.
- 2) ավագանու հաստատման է ներկայացնում տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույթաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը.
- 3) կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.
- 4) Տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները.
- 5) Ապահովում է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը:

9. Պաշտպանության կազմակերպման բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) Վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակչության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.
- 2) Մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը, ինչպես նաև տարածքային պաշտպանության և ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման միջոցառումներին.

10. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) Իրականացնում է միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.
- 2) Իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը:
11. **Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը՝**
 - 1) կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները.
 - 2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն),
 - 3) օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.
 - 4) համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.
 - 5) ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն.
 - 6) Վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.
 - 7) Իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.
 - 8) համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան՝ տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն.
 - 9) Կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.
 - 10) Կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.
 - 11) Կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> օրենքով նախատեսված այլ լիազորություններ.
 - 12) Կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> օրենքով նախատեսված այլ լիազորություններ.
 - 13) Կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը:
12. **Հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարը՝**
 - 1) կազմում է համայնքի հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.
 - 2) մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը.
 - 3) օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը.
 - 4) վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.
 - 5) կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.
 - 6) իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ:

13. Տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային ենթակայության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.
- 2) կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ճանապարհների վրա.
- 3) կազմակերպում և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը.
- 4) տալիս է համայնքի տարածքում մարդատար տաքսիների բացառությամբ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն:

14. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.
- 2) կազմակերպում և կառավարում է համայնքի ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորազման աշխատանքները.
- 3) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն.
- 4) ստեղծում է պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջացառումների կազմակերպման, անցկացման համար.
- 5) առաջացնում է համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը:

15. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

- 1) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը.
- 2) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է մարզական հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն վերանորոգում, ստեղծում է հանգստի գոտիներ:

16. Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) միջոցառումներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին.
- 2) միջոցներ է ձեռնարկում սոցիալական աջակցման կարիք ունեցող անձանց և ընտանիքներին՝ օգնելու հայտնաբերել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իրենց կարողությունները.
- 3) նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով <<Սոցիալական աջակցության մասին>> օրենքով սահմանված սոցիալական ծառայությունների կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ.
- 4) ապահովում է <<Սոցիալական աջակցության մասին >> օրենքով սահմանված տեղական սոցիալական ծրագրերի կազմումը և իրականացումը՝ որպես առանձին ծրագիր կամ որպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մաս:

17. Գյուղատնտեսության, անասնաբուծության և բուսասանիտարիայի բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

- 2) տալիս է համայնքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.
- 3) իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում.
- 4) աջակցում է գյուղատնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը,
- 5) աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը.
- 6) տրամադրում է լիազոր մարմինն տեղեկատվություն կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ:

18. Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը.

19. Ջրոսաշրջության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) գույքագրում և վարում է համայնքի զրոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.
- 2) սահմանում և տրամադրում է համայնքում հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ զրոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար.
- 3) զրոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման և զրոսաշրջության կայուն զարգացման նպատակով համագործակցում է պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության հետ.
- 4) խթանում է զրոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զրոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը:

III. ՄԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

20. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջվող սեփական լիազորությունների իրականացման նպատակով, մինչև համայնքի տվյալ տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում իրականացվելիք սեփական լիազորությունների ցանկը և դրանց կատարման համար անհրաժեշտ ծախսերը:

21. Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից, որոշում է բոլոր սեփական լիազորությունների համար հատկացվող ընդհանուր գումարի և յուրաքանչյուր սեփական լիազորության իրականացման համար անհրաժեշտ հատկացման չափը:

22. Հաշվետու տարվա ընթացքում կամավոր լիազորությունների ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր լիազորության իրականացման նպատակով հատկացված գումարը կարող է համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր լիազորությունների իրականացման համար՝ ելնելով տարվա ընթացքում իրադրության փոփոխություններից:

23. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարի վերապահված այլ սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

24. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայողությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները համայնքի ղեկավարի կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից սեփական լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

25. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է հիսուն հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 3 անգամ, որի չափը չի կարող գերազանցել մեկ հարյուր քսան ՀՀ դրամը: Արգելվում է սոցիալական օգնություն հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի ղեկավար, համայնքապետարանի

աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին ծնող, քույր, եղբայր, կին, ամուսին, եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

26. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան մեկ անգամ՝ տարեկան ուսման վարձի երեսուն տոկոսի չափով:

27. Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեյի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, կին, ամուսին), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

28. Համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության բնագավառներում սեփական լիազորություններն իրականացնել 2021թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին:

29. Մինչև 10 000 000 (տաս միլիոն) դրամ ծախս պահանջող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին:

30. 10 000 000 (տաս միլիոն) դրամից ավել ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 48-Ն

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջները՝ Մրգաշեն համայնքի ավագանին որոշում է.

Մրգաշեն համայնքի տարածքում 2021 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1, հավելված 2:

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մ. Ասատրյան	/  /		
Զ. Արամյան	/  /		
Մ. Խաչատրյան	/  /		
Դ. Հակոբյան	/  /		
Գ. Մուրադյան	/  /		
Դ. Նիկողոսյան	/  /		
Մ. Վարդանյան	/  /		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

h/h	տուրքերի տեսակները	օրենքով սահմանված դրույքաչափերը (դրամ)	առաջարկվող դրույքաչափերը (դրամ)
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական շենքերի և շինությունների համար՝		
1)	Մինչև 300մ ² ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200մ ² ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝	15000	10000
2)	սույն կետի “1/” ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝		
ա.	200մ ² –500մ ² ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30,000	20000
բ.	500մ ² -1000մ ² ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50,000	35000
գ.	1000մ ² - 3000 մ ² ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50,000	45000
դ.	3000 մ ² -ից ավելի ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100,000	75000
	ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝		
3)	Մինչև 20մ ² ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	3,000	1500
4)	20մ ² և ավելի ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	5,000	2500
2.	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
1)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝	3000	1500

2)	բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն և բացի սույն կետի “ 1/ ” ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով		
3)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը		
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	5000	2500
4.	Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝		
1)	ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև	10.001	2500 (կիրառվել է 0.5 գործակից)
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10.001- 13.001	5050 (կիրառվել է 0.5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	13.001- 20.001	6550 (կիրառվել է 0.5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20.001- 25.001	12.500 (կիրառվել է 0.5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25.001- 45.001	22.500 (կիրառվել է 0.5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	45.001- 100.001	50.000 (կիրառվել է 0.5 գործակից)
2)	ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև	10.001	2.500 (կիրառվել է 0.5 գործակից)
բ.	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի	10.001- 13.001	5050 (կիրառվել է 0.5

	կազմակերպման դեպքում՝		գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	13.001-20.001	6550 (կիրառվել է 0.5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20.001-25.001	12500 (կիրառվել է 0.5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	25.001-45.001	22.500 (կիրառվել է 0.5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	45.001-100.001	50.000 (կիրառվել է 0.5 գործակից)
5.	Համայնքի վարչական տարածքում		
ա)	բացօդյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա և 1մ ² -ի համար	350	350
բ)	համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	200.000	100.000 (կիրառվել է 0.5 գործակից)
գ)	համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում» տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	60.000	30.000 (կիրառվել է 0.5 գործակից)
գա)	համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		
	հիմնական շինությունների ներսում՝		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև	5.001	2.500 (կիրառվել է 0.5 գործակից)
բ.	մինչև 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	5.001-10.001	5.000 (կիրառվել է 0.5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10.001-15.001	7.500 (կիրառվել է 0.5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15.001-20.001	10.000 (կիրառվել է 0.5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	20.001-30.001	15.000 (կիրառվել է 0.5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	30.001-50.001	25.000 (կիրառվել է 0.5 գործակից)
	ոչ հիմնական շինությունների ներսում՝		
ա.	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային	1.001	500

	սննդի օբյեկտի համար՝ մինչև		(կիրառվել է 0.5 գործակից)
բ.	մինչև 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1.001-2.001	1000 (կիրառվել է 0.5 գործակից)
գ.	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2.001-4.001	2000 (կիրառվել է 0.5 գործակից)
դ.	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4.001-8.001	4000 (կիրառվել է 0.5 գործակից)
ե.	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	8.001-15.001	7500 (կիրառվել է 0.5 գործակից)
զ.	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	15.001-25.001	12.500 (կիրառվել է 0.5 գործակից)
6.	Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24 ⁰⁰ - ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		
ա)	առևտրի օբյեկտների համար՝	5.000-50.000	25000
բ)	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	25.000-100.000	50000
գ)	բաղնիքների, (սաունաների) համար՝	200.000-500.000	200000
դ)	խաղատների համար	500.000-1.000.000	500000
ե)	շահումով խաղերի համար	250.000-500.000	250000
զ)	վիճակախաղերի համար՝	100.000-150.000	100000
7.	Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս 1մ ² -ի համար՝		
ա)	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային % արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2.000	2000
բ)	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային %) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	3.500	3500
գ)	այլ արտաքին գովազդի համար՝	1.500	1500
դ)	դատարկ գովազդային վահանակների համար՝	700	700
8.	Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	50000-100000	50000
9.	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝	10.000	10.000
10.	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և	500.000	500000

	(կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		
11.	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝		
ա)	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	1.250.000	1.250.000
բ)	5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	2.500.000	2.500.000
գ)	7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	3.500.000	3.500.000
դ)	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	5.000.000	5.000.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճար սահմանել 10 000 դրամ:
2. Համայնքի օգտագործման և տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, աճուրդ, ուղղակի վաճառք, փոխանակում և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց տեղական վճար սահմանել ծախսված գումարի չափով:
3. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար տեղական վճար սահմանել 5 000 դրամ:
4. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով:
5. Ջրմուղ-կոյուղու համար, որը ներառված չէ ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով:
6. Համայնքի տարածքում կենցաղային աղբի համար՝
 - 1) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ սահմանել 200 դրամ:
 - 2) ըստ իրավաբանական անձանց աղբահանության սակագներ
 - ա. առևտրի /այդ թվում շուկաների /, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ
 - բ. հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով 1 քառակուսի մետր մակերեսի համար 20 դրամ
 - գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ
 - դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ
7. Մրգաշեն համայնքի մանկապարտեզում 2021 թվականի համար ծնողական վճար սահմանել 6500 (վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ սահմանել 1000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՂՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 49-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջի՝ համայնքի ավագանին որոշում է.

Մրգաշենի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից կատարվող ծառայությունների դիմաց հավաքագրվող տեղական վճարների համար սահմանել 30% զեղչ 1-ին կարգի հաշմանդամ կամ ծնողագուրկ, երեք և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների, 40% զեղչ զինծառայողների ընտանիքների երեխաների համար, 50% զեղչ զինվորական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած, 70% զեղչ զոհված զինվորական ծառայողների ընտանիքների երեխաների համար:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Մ.Ասատրյան	/  /
Զ.Արամյան	/  /
Մ.Խաչատրյան	/  /
Դ. Հակոբյան	/  /
Գ. Սուրադյան	/  /
Դ.Նիկողոսյան	/  /
Ս. Վարդանյան	/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 50-Ա

ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ




Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

Մրգաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը, պաշտոնային դրույքաչափը սահմանել 344000 (երեք հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Մ.Ասատրյան	/  /
Զ.Արամյան	/  /
Մ.Խաչատրյան	/  /
Դ. Հակոբյան	/  /
Գ. Մուրադյան	/  /
Դ.Նիկողոսյան	/  /
Մ. Վարդանյան	/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020 թվականի N 51-Ա

ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի 28-րդ կետի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմի, Մրգաշեն համայնքի
մանկապարտեզ՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի
աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը
համաձայն հավելված 1, 2:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Ս. Ասատրյան

/  /

Զ. Արամյան

/  /

Ս. Խաչատրյան

/  /

Դ. Հակոբյան

/  /

Գ. Մուրադյան

/  /

Դ. Նիկողոսյան

/  /

Ս. Վարդանյան

/  /

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1

Մրգաշեն համայնքի ավագանու

2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 51-Ա որոշման

**Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարանի 2021 թվականի
աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 17

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիր	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափ	Հավելում	Հավելավճար	Աշխատավարձի չափը, ՀՀ դրամ
1	2	3	4	5	6	7	8
Քաղաքական պաշտոններ							
1	Համայնքի ղեկավար		1	344000			344000
Հայեցողական պաշտոններ							
2	Համայնքի ղեկավար տեղակալ		1	212000			212000
3	Համայնքի ղեկավարի օգնական		0.5	210000			105000
Համայնքային ծառայության հաստիքներ							
4	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	220000		22000	242000
5	Գլխավոր մասնագետ	2.3-1	1	201000			201000
6	Առաջատար մասնագետ	3.1-1	1	113000			113000
7	1-ին կարգի մասնագետ	3.2-1	1	103000		10300	113300
8	2-րդ կարգի մասնագետ	3.3-1	1	96000			96000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ							
9	Համակարգչային օպերատոր		1	118000			118000
10	Վարորդ		1	92700			92700
11	Օժանդակ բանվոր		1	120000			120000
12	Աղբահավաք բանվոր		1	120000			120000
13	Հավաքարար		1	92700			92700
14	Պահակ		1	113000			113000
15	Տեխնիկական աշխատող		0.5	136000			68000
16	Անասնաբույժ		0,5	100000			50000
17	Հուշարձանի և կանաչ տարածքների պահպանության բանվոր		0.5	100000			50000
	ընդամենը			2391400		32300	2250700

Համայնքի ղեկավար

Վ. Պողոսյան



Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի 2021 թվականի աշխատակիցների
թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 17
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Պաշտոնի ծածկագիր	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափ	Հավելում	Հավելա վճար	Աշխատավա րձի չափը, ՀՀ դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Տնօրեն		1	136500			136500
2	Տնտեսվար		0,5	117000			58500
3	Հաշվապահ		0,5	130000			65000
4	Դաստիարակ		3	126000			378000
5	Երաժշտական դաստիարակ		0,75	126000			94500
6	Պարուսույց		0,25	126000			31500
7	Դաստիարակի օգնական		3	92700			278100
8	Բուժքույր		0,75	92700			69525
Տեխնիկական սպասարկման անձնակազմ							
9	Պահակ		1	92700			92700
10	Հավաքարար		0,5	92700			46350
11	Օժանդակ բանվոր		0,5	92700			46350
12	Խոհարար		1	94000			94000
13	Խոհարարի օգնական		0,5	93000			46500
	ընդամենը			1412000			1437525

Համայնքի ղեկավար՝ Կ. Պողոսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Մրգաշենի համայնքապետարան, 1-ին փողոց 22 վարչական շենք
mrgashen.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

